


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏԱՐԱԾԱԿԱՆ ՓԱՆԾԱՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏԱՐԱԾԱԿԱՆ ՓԱՆԾԱՆԵՐ



792/47.925/9

Կ-964



Անի.— Պերճ Պողոսյանը Ախուրյան գետի ափին, Կուլսի ամրոցի մոտ:
Հուսանկարեց Արամ Վրույրը:



Left Group. — 1915 p. View of monument
from the left side.

27.08.2013
ԳՄԳ 85.78

Խմբագիր՝ ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս
Ռուբեն Զառյան

Փաշայան Ռ. Ա.

Վ 964 Փ Արամ և Արտաշես Վրույրներ. — Եր.: Հայաստան,
1989. — 59 էջ, 13 թ. նկ.:


Գիրքը պատմում է դերասաններ Արամ և Արտաշես Վրույրների
լուսանկարչական և հնագիտական գործունեության մասին որը խո-
շոր նշանակություն ունի հայ ժողովրդի նյութական մշակույթի հուշար-
ձանների պահպանման և ուսումնասիրության գործում:
Նախատեսվում է ընթերցող լայն շրջանների համար:

4901100000
96—89
701 (01)—89

ԳՄԳ 85.78+63.4 (22)

ISBN 5—540—00350—0

© Փաշայան Ռ. Ա., 1989



3290-90

ՈՐՊԵՍ ԱՌԱՋԱԲԱՆ

Մեր ազգային մշակույթի դարավոր պատմությունը հարուստ է ինքնատիպ անհատականություններով, որոնք իրենց անկաշառ նվիրվածությամբ ու ներդրած ծանրակշիռ ավանդով եկան հարստացնելու այդ նույն պատմությունը յուրօրինակ երանգներ հաղորդելով նրա տարբեր ժամանակահատվածներին:

Այդ երախտավորների շարքում իրենց տեղն ունեն հայր ու որդի Արամ և Արտաշես Վրույրները:

Հայ բեմի նշանավոր կատակերգակ Արամ Վրույրի ավելի քան քառասնամյա դերասանական գործունեությանը համատեղությամբ «ուղեկից» եղան հնագիտությունը, լուսանկարչական արվեստն ու լրագրային գործը, նաև գրականությունն ու թատերագրությունը, որոնցով ամբողջանում է այդ երախտավոր գործչի բազմաբեղուն նկարագիրը:

«Վրույրը 1913 թվականից մինչև իր մահը ծանոթ է ինձ իր ամբողջ գործունեությամբ», — իր ավագ գործընկերոջ մասին գրում է Վահրամ Փափազյանը: Այդ գործունեությունը զանազան ճյուղավորումներ ունի, որի արմատը լինելով և մնալով մինչև վերջը դերասանական արվեստը, տեղի էր տրվել տարբեր ծլարձակումների, որոնք միամիտ մարդու համար թվում էր, թե ոչ մի կապակցություն չէին կարող ունենալ թատերական արվեստի հետ:

Սակայն իրականությունը այն է, որ այդ ծլարձակումները նրա՝ Վրույրի հարուստ ու խորունկ ներաշխարհից բխած ճառագայթումներն էին: Եվ որովհետև արվեստագետը գալիս է,

անցնում աշխարհով և նրա հիշատակը իր ժամանակակից-
ների հետ անցնում է, ապա Վրույրը այն երջանիկ բացառու-
թյուններից է, որ եթե ինքը գնաց, իր հանճարի ծլարձակումը
մնաց, և այսօր նրան շճանաչողները կարող են միայն աղոտ
ու հարևանցի գաղափար ունենալ նրա արվեստի հրդեհից, հեն-
վելով միմիայն այդ մեծ հրդեհի մի քանի աղոտ ցուացում-
ներին, ինչպիսին են նրա հնախոսության մարմաշը, լուսա-
նկարչական շնորհը և լրագրական անվիճելի կարողություն-
ները:

Այսօր նրան շտեմնողը կարող է միայն այս վերոհիշյալ
հիմքերի վրա հաստատված, մի որոշ պատկեր նկարել այս-
օրվա ընթերցողի համար, որը, սակայն, իր անկեղ-
ծությամբ իսկ, լրիվ պատկերացումը չի լինի Վրույրին,
որ նախ և առաջ սովորականից դուրս մի արտիստ էր, լա-
վագույն ու դասական բոլոր կատակերգականների մեկնաբանն
ու արտացոլումը. իր ժամանակի և իր սևողության ընթացքում:

«Վաղեմի Պլավդոսից մինչև Մոլիեր, Գոլդոնիից մինչև
XIX դարու կոմեդիան Վրույրի հարազատ ներքնաշխարհի
սնունդն էր, միևնույն ժամանակ և նրա գոյության կրակը,
որով վառվեց Վրույրը ինքնավառ բոցի նման՝ մինչև մոխ-
րացավ»¹:

Խոսելով Պ. Ադամյանի դերասանական արվեստի մա-
սին, ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ, արվեստաբան Ռուբեն Զար-
յանը իրավացիորեն նշել է, թե դերասանի համար որքան
մեծ նշանակություն ունի տաղանդի զարգացման աստիճանը,
որ պայմանավորված է նրա գիտելիքների կուտակումներով
ու պաշարով: «Մենք չգիտենք, և ոչ ոք էլ չի կարող ասել,
թե Ադամյանի բեմական արվեստի մեջ, որ ներգործության
այդպիսի հզոր ուժ է ունեցել, ի՞նչ մաս էր կազմում բնա-
կանը և ինչ տեղ գրավում ստացականը նրա համեմատու-
թյամբ,— գրում է Ռ. Զարյանը:— Գիտենք, որ բնությունն
այստեղ ահռելի չափերով է գործ տեսել, բայց նվազ չէր և
գիտության դերը, որ հղկել ու մշակել էր բնության տվա-
ծը... Նույնը կարելի է ասել նաև մեր մյուս անվանի դերա-
սանների մասին: Չենք կարող, օրինակ, մի առանձին բա-

¹ «Խորհրդային գրականություն», 1979 թ., № 9, էջ 124:

25 թողել, այնպես որ նրա ժողովածուն ավերակների մայրաքաղաքի լիակատար, ամենամանրամասն տեսարանացույցը պիտի դառնա»¹։

Քանի որ կրկին խոսք բացվեց Հ. Քյուրքճյանի մասին, ավելորդ չենք համարում մի փոքր ծանրանալ նրա վրա։ Քյուրքճյանի Անվո գործունեության առաջին արձագանքողը եղավ Հ. Գեղամյանը՝ «Ախալցխայից մինչև Անի» ճամփորդական նոթերում, որ հրապարակված է «Փորձ» ամսագրի էջերում (1879 թ., № 12, 1880 թ., № № 4—9)։ 1879 թ.-ի հուլիսի 15—30-ը Գեղամյանը ապաստանել է Անիում, ականատես լինելով Քյուրքճյանի նվիրյալ գործունեությանը։ Թե ինչպիսի մաքառումներով ու տքնությամբ էր իրականացնում իր նպատակը Քյուրքճյանը, նկարագրված է նոթագրության մի հատվածում։

«Հուլիսի 15-ը մի պայծառ և զվարթ օր էր։ Առավոտյան քստ սովորականին վաղ վեր կենալով մենք սկսեցինք մեր գործը։ Քյուրքճյանը իր ծառաներով շալակեց իր մեքենաները և ընկավ խորհուրդող ավերակների մեջ, իսկ ես՝ իմ Դարվիշ անունով առաջնորդի ուղեկցությամբ, բարձրացա միջնաբերդի ետքևում եղած լեռը։ Ժամը 10-ն էր, որ ես դադարած խոնջած, լեռան ստորոտից գլորվելու ահից սարսափած վերադարձա մեր բնակարանը — Կաթողիկե եկեղեցին, ուր վրանի կշտին պալլած Քյուրքճյանը պլեղով ծածկում էր իր քրտնախարշ մարմնո այս և այն մասը և շայլ ձգած ինձ սպասում...

...Չայերս և նախաճաշիկներս անելուց հետ մեզանից ամեն մեկը գնաց իր մտադրյալ ավերակը նկարելու և նկարագրելու, մինչև ժամը 3-ը, երբ Դարվիշը Անի գյուղից բերեց մեր սովորական ճաշը՝ մի մեծկակ դույլ թանապուր միշտ 30 կոպ. արժողությամբ...

...Ճաշերս դեռ նոր էինք վերջացրած, որ հանկարծ մի կարճատև մրրիկ փրթավ Անվո հյուսիսային կողմից և նրա ետևից իսկույն սկսավ տեղալ սատիկ կարկուտ։ Ամենքս փախանք մտանք մեր վրանը և դեռ նոր էինք քուջուրիլ, հանկարծ տեսնեմ իմ Քյուրքճյանը պինշը քամի մտած հորթի

¹ Ան, Անի, էջ 65—66։

նման դուրս թռավ, ծառաներն էլ ետևից կանչելով: Խեղճի մեքենաները, շիշերը, ապակիները, դեղերի մի մասը այս և այն ավերակների կողքին էին դրած, և նա շնչասպառ վազ էր տալիս նոցա ազատելու: Մինչև Քյուրքճյանը և իր ծառաները վաղ էին տալիս դեպի ավերակները, ես աշխատում էի մեր վրանի կշտին դարսոտած արկղերը, շիշերը և մուժ սենյակը՝ այսինքն լաբորատորիան, պատսպարել անգուժ կարկտի ձեռքից... վերջապես ինչ որ կարելի էր ազատել, ազատեցինք, կոտորված և ջարդոտածներուն համար էլ հոգվոց ասացինք...»¹:

Գեղամյանը հետաքրքրական մանրամասներ է պատմում նաև այն մասին, թե ինչ միջոցների էր դիմում Քյուրքճյանը Անվո և առհասարակ իր տեսած այլ վայրերի ավերակները քանդելուց պահպանելու համար: Ամեն մի կոթող լուսագրելուց հետո կանչում էր շրջակա միամիտ ու տգետ բնակիչներին և երկար-բարակ պատմություններ անում ժողովրդական զանազան հեքիաթներից ու առասպելներից, որոնցով «ապացուցում» էր, թե եկեղեցին ու մզկիթը քանդողին աստված կպատժի՝ օջախը քարուքանդ կանի, կշորացնի վար ու ցանքը, կենդանիների մեջ վարակիչ ցավեր կտարածի և այլն, և այլն: Այդ ամենը ցանկալի ներգործություն էր ունենում ունկնդիրների վրա: Քյուրքճյանը նաև հավատացնում էր նրանց, որ ինքը մեծ վեզիրի հրամանով է նկարահանել այդ ավերակների պատկերները ու վերադարձին դրանք պետք է հանձնի նրան: Ու եթե մեծ վեզիրի ներկայացուցիչը գա և պարզի, որ պատկերում երևացող այս կամ այն սյունը, քարը, բեկորը իր տեղում չէ՝ վայն եկել ու տարել է մեղավորին...

Գեղամյանի վկայությամբ՝ Անիի մասին իր նոթերը գրելու շարժառիթը, նաև ավերակ քաղաքի վերաբերյալ տեղեկություններից շատերի սկզբնաղբյուրը եղել է Հովհաննես Քյուրքճյանը: Այս հանգամանքը գալիս է հավաստելու, որ Քյուրքճյանը լոկ լուսանկարիչ չէր, այլ հմուտ ու լրջմիտ մի գիտնական՝ քաջատեղյակ իր ժողովրդի անցյալի պատմությանը: Իսկ այդ բանը հաստատող վավերագրեր կան բարեբախտաբար:

¹ «Փորձ», 1880 թ., № № 8—9, էջ 123—124:

1880 թ. ուսերեն լեզվով Պետերբուրգում հրատարակած իր «Պ. Քյուրքճյանի աշխատասիրած Հայաստանի լուսանկարչական հավաքածուի հնախոսական արժեքը» աշխատության մեջ պրոֆեսոր Քերովը Պատկանյանը մանրամասն քննության է առնում Քյուրքճյանի՝ իրեն ներկայացրած հավաքածուն, ցույց տալով դրա գիտական արժեքը։ Պետերբուրգի համալսարանի հայազգի պրոֆեսորի այդ բարձրարժեք ուսումնասիրությունը թարգմանվել է հայերեն ու տպագրվել «Փորձ» ամսագրի 1880 թ. № 10-ում։

3290. 90
Քյուրքճյանը Պատկանյանին էր ուղարկել Հայաստանի տարբեր հատվածներում եղած վանքերի, եկեղեցիների ու քաղաքապարիսպների արձանագրությունների լուսանկարչական պատճենները՝ թվով 40 նմուշ, արևելագետների միջազգային 3-րդ համաժողովին ներկայացնելու համար։ Հաշվի առնելով հավաքածուի գիտական կարևորությունը, Պատկանյանը դրա համառոտ նկարագրությունը՝ գիտական վերլուծությամբ, զետեղում է համաժողովի տեղեկագրքում։ «Բնականից հմուտ ձեռքով հանված այս պատկերները, — գրում է նա, — պարունակում են միջին, մանավանդ է—ժ դարերի Հայաստանի ճարտարապետական հիշատակարանների արվեստական արդյունքը, որոնք մեծապես կարող են նպաստել այդ երկիրը հնագիտորեն ուսումնասիրելու համար»¹։

Թեև հավաքածուում տեղ գտած արձանագրությունների մեծ մասն արդեն ընդօրինակել ու հրատարակել էին տարբեր ճանապարհորդներ ու գիտնականներ, և «այսուամենայնիվ, — նշում է Պատկանյանը, — հնագրական կողմից նոքա խիստ կարևոր են, որովհետև տառերի ձևերը ներկայացնում են այնպես, ինչպես որ փորագրված են քարի վրա»²։

Հավաքածուն ներկայացնում էր Կարսի հուշարձանների, Մարմաշենի, Կեչառիսի և էջմիածնա վանքերի արձանագրությունները։ «Բացի հայերեն արձանագրություններից, հավաքածուի մեջ կան և վանա սեպագրերի ձևով երկու հիշատակարաններ, — վկայում է Պատկանյանը, — որոնք թեպետ նույնպես հրատարակված են, բայց սեպագրով պարապողների համար այնուամենայնիվ կարող են կարևոր նշանակու-

¹ «Փորձ», 1880 թ., № 10, էջ 133։

² Նույն տեղը։

թյուն ունենալ, որովհետև վանա 60-ից ավելի արձանագրությունները մինչև այսօր աչքի տեսությունամբ էին գաղափարված... Որքան ինձ հայտնի է՝ պ. Քյուրքճյանն առաջինն է, որ լուսանկարչական միջոցը գործ դրեց վանա ձևի արձանագրությունները գաղափարելու»¹:

Ք. Պատկանյանի ուսումնասիրությունը կարևորվում է նաև նրանով, որ հնարավորություն է ընձեռում ճշտելու մի թյուրիմացություն:

Գիտական ու գեղարվեստական մեծարժեք «Անի» աշխատության մեջ կենն անդրադառնալով Հ. Քյուրքճյանի հայրենանվեր գործունեությանը, գրում է.

«Իր ժողովածուի միայն առաջին հատորը նա կարողացավ հրատարակել, որ բաղկացած էր 40 նկարից: Չնայած իր թանկությանը, ժողովածուն տարածվեց, արժանի գնահատություն գտավ... Մինչ այդ, Քյուրքճյանի պես ոչ ոք չէր կարողացել ժողովրդականացնել մեռած քաղաքը: Միևնույն ժամանակ Քյուրքճյանի ժողովածուն ուներ և գիտական նշանակություն: Հանգուցյալ պրոֆեսոր Պատկանյանը մի փոքրիկ բռնշուրով ծանոթացրեց ուս հասարակությանը այդ ժողովածուի հնագիտական արժեքի հետ»² (ընդգծումն իմն է—Ռ. Փ.):

Վերևում արդեն նշել ենք, թե որոնք էին Ք. Պատկանյանի արժեքավորած լուսանկարչական հավաքածուի պարունակած պատկերները, որոնք ոչ մի կապ ու առնչություն չունեն Քյուրքճյանի Անվո գործունեության հետ:

Կենն պարզապես շփոթել է այդ հավաքածուն Անիի ստերեոսկոպիկ պատկերների ժողովածուի հետ: Թե ո՞րն է շփոթմունքի բուն շարժառիթը, դժվարանում ենք ասել: Մնում է ենթադրել, որ հարգարժան պատմաբանը անձամբ չի ծանոթացել Պատկանյանի աշխատությանը, և այդ մասին ինֆորմացիա է ստացել այլ աղբյուրներից: Չի բացառվում, որ թյուրիմացության պատճառ կարող էր լինել և այն հանգամանքը, որ Պատկանյանին ներկայացված Քյուրքճյանի հավաքածուն պարունակում էր 40 նմուշ, նույնքան նմուշ-

¹ «Փորձ», 1880 թ., № 10, էջ 133.

² Նույն տեղը, էջ 52:

ներից էր բաղկացած նաև Քյուրքճյանի նկարահանած Անիի ստերոսկոպիկ պատկերների ժողովածուն: Որ Անիին նվիրված ժողովածուն իրոք 40 պատկեր է ամփոփել՝ վկայում է նաև Ա. Վրույրը, 1903 թ. հունվարի 23-ին Մառին հղած նամակում. «Թեև իմ քաջարվեստ վարպետս՝ Իվ. Քյուրքճյան, շատ մանրամասն նկարած էր¹, բայց մի շատ փոքր մաս՝ այն է 40 պատկեր միայն հրատարակեց և հեռացավ արտասահման, իսկ նրա անշափ թանկագին նեգատիվները հայտնի չէ, թե ի՞նչ եղան կամ ու՞մ մոտ մնացին² (ընդգծումն իմն է— Ռ. Փ.):

Օգտվելով առիթից, մի ճշտում ևս կատարենք՝ կապված Հ. Քյուրքճյանի գործունեության հետ:

Աշխարհագրագետ Թադևոս Հակոբյանը պատմաճանաչողական ու գիտական ծանրակշիռ արժեք ներկայացնող իր «Անիի պատմություն» ստվարածավալ աշխատության ներածականում, թվարկելով Ն. Մառի ղեկավարած Անիի գիտարշավախմբի մասնակիցներին, նրանց շարքում հիշատակում է նաև Հ. Քյուրքճյանի անունը³: Քյուրքճյանը չէր կարող մասնակից լինել Անիի պեղումներին մի պարզ պատճառով. երբ Մառը սկսեց իր պեղումները Անիիում՝ Քյուրքճյանը վաղուց արդեն գտնվում էր արտասահմանում: Ինչպես արդեն նշել ենք, Հ. Քյուրքճյանը ակտիվ մասնացել է ազգային-ազատագրական շարժումներին, որի համար ենթարկվել է ցարական կառավարության հետապնդմանը: Դա առիթ է եղել, որպեսզի նա 1881 թ.-ին հեռանա Ռուսաստանի սահմաններից և հաստատվի Վիեննայում: 1884 թ.-ին տեղափոխվում է Ինդոնեզիա, ապրում Սուրաբայայում: 1891 թ.-ին ճավա կղզում՝ Հ. Քյուրքճյանի անմիջական մասնակցությամբ, ստեղծվում է «Հայոց խրախուսական միությունը», որի նպատակն էր օգնություն ցույց տալ արևմտահայության ազատագրական պայքարին: Քյուրքճյանը գրել է այդ կազմակերպության ծրագիրը, որը հրատարակվել է Մարսելում:

¹ Խոսքը Անիի մասին է:

² Նամակը գտնվում է Լենինգրադի էրմիտաժում պահվող Ն. Մառի արխիվում:

³ Թ. Հակոբյան, Անիի պատմություն, Երևան, 1980 թ., էջ 6:

«Հայոց խրախուսական միութիւնը» գոյատեւել է մինչև Քյուրքճյանի մահը: Քյուրքճյանի կենսագրութեան ուշագրավ մանրամասն եւ, նա լուսանկարել ու Հոլանդիայի թագուհուն է նվիրել Ճափա կղզու մի շարք տեսարաններ (այն ժամանակ Ճափան Հոլանդիայի գաղութն էր): Թագուհին այնքան է հաճանել այդ լուսանկարները, որ դրանց հեղինակին շնորհել է պալատական նկարչի կոչում: Քյուրքճյանը մահացել է Ճափա կղզում՝ 1902 թ.-ին¹:

Հ. Քյուրքճյանի նեգատիվների մասին որոշ տեղեկութիւններ ստացանք Արամ Վրույրի որդուց՝ ՀեւՍՀ վաստակավոր արտիստ, հնագետ-լուսանկարիչ Արտաշես Վրույրից: Նեգատիվները երկար տարիներ գտնվել են Ֆեթիվաջյան ազգանունով արեւմտահայ մի լուսանկարչի մոտ: Հետագայում դրանց մի մասը Ֆեթիվաջյանից գնել էր հանգուցյալ ճարտարապետ Միքայել Մազմանյանը: Մյուս մասը Արտաշես Վրույրի խորհրդով գնել էր Արա Վրույրը (Արամ Վրույրի ավագ որդին), որ տարիներ շարունակ գտնվում էր Արտ. Վրույրի անձնական արխիվում: Արխիվը վերջերս հանձնվեց ՀեւՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր պատմութեան և կուլտուրայի հուշարձանների պահպանման ու օգտագործման վարչութեան ենթակայութեան «էրեբունի» թանգարանին: Քյուրքճյանի՝ թվով 38 նեգատիվ պատկերում են ավերակ քաղաքի տարբեր հուշարձաններ:

* * *

Ընդամենը մեկ կամ մեկուկես տարի է աշակերտել Արամ Վրույրը Հ. Քյուրքճյանին, կարճատե մի ժամանակաշրջան, որ շեշտակի բեկում առաջացրեց պատանու ներաշխարհում: Հայրենասիրական գաղափարներով տոգորված Քյուրքճյանի հետ այդ միջանցիկ շփումը Վրույրին մասնագիտական հմտութիւն բերելուց դատ, նրա համար ունեցավ դաստիարակչական էական նշանակութիւն՝ իր ժողովրդի մշակույթի պատմութեանը բոլորանվեր տրամադրվելու իմաստով: Իսկ որ Վրույրը, իրոք, անգնահատելի ծառայութիւն մատուցեց ազ-

¹ Քյուրքճյանի կյանքի վերջին տարիների մասին փաստերը քաղել ենք Գ. Ստեփանյանի «Կենսագրական բառարանի» 3-րդ անտիպ հատորից:

գային մշակույթին՝ հանրության սեփականութիւնը դարձնելով հայ ճարտարապետութեան բազմաքանակ կոթողներ և նյութական այլազան արժեքներ, վկայում է նրա գիտակցական կյանքի ամբողջ ընթացքը և այն ստվարածավալ ժառանգութիւնը, որ կտակեց նա գալիք սերունդներին:

Պատմական հուշարձանների լուսագրման առավել արդյունավետ գործունեութիւնը Արամ Վրույրը սկսեց 1890 թվականից: Իսկ երկու տարի անց՝ 1892 թ.-ին, երբ Անիում հանդիպեց գիտնական Ն. Մառին, որը այդ տարվանից սկսեց իր պեղումները Բագրատունյաց մայրաքաղաքում, նոր իմաստ ու քովանդակութիւն ստացավ Վրույրի գործունեութիւնը հնագիտութեան բնագավառում: Սկզբնական շրջանում, այն է՝ 1892—1893 թվականներին կատարած և հետագա տարիների (մինչև 1904 թվականը) աշխատանքները Անիում ու Հայաստանի այլ վայրերում, Վրույրի գործունեութիւնը սահմանափակվում էր լոկ Ն. Մառի առաջադրանքները կատարելով՝ միաժամանակ իր ծրագրած ստերեոսկոպիկ ժողովածուների համար առանձին հուշարձաններ լուսագրելով, որ Վրույրի հնագիտական հետագա բազմաբեղուն գործունեութեան սկիզբն էր միայն:

...1897 թվականի ամռանը Գարեգին Երիցյանը Ստեփան Շահումյանի, Ստեփանոս Մալխասյանի ու Մակար Եկմալյանի հետ այցելում է Անի, ուր հանդիպում է Արամ Վրույրին: «Հանկարծ անկյունում տեսանք ավերակների վրա նըստած, ազգային հագուստներով մի խումբ քրդերի,— պատմում է Գարեգին Երիցյանը:— Քրդերից ոչ հեռու, փլատակների արանքում տեսանք մի բացվածք, իսկ դրա մուտքի մոտ՝ պատին հենված ֆաներային մի վահան, որին փակցված ապակու կտորի վրա երևում էին դեռ թաց լուսանկարներ:

— Ասացեք, ո՞վ է այդտեղ,— գոռաց Ստեփանը (Շահումյանը — Ռ. Փ.), ու բացվածքից հայերեն լսվեց մի խուլ ձայն.

— Սպասեք, ես զբաղված եմ:

Նստեցինք քրդերի մոտ, և նրանք մեզ մեկնեցին կեռասով լիքը մի թաս: Վերջապես երևաց ինքը՝ հանելուկային նկարիչը: Նա մեր սիրելի արտիստ Վրույրն էր, որը լավ լուսանկարիչ էր, նույնիսկ մի ժամանակ Թիֆլիսում, Վորոն-

ցովի հուշարձանի մոտ, ուներ իր սեփական նկարչատունը։ Վրույրը մեզ պատմեց, որ Անի է եկել Նիկողայոս Յակովլևիչ Մառի հանձնարարությամբ՝ Անիի պատմական հուշարձաններից մի քանիսը նկարելու և ահա, հիմա էլ, շարունակում է մնալ այդ խուլ անկյունում՝ փող վաստակելու համար։

— Մի քիչ ձանձրալի է այստեղ մենակ ապրելը, — ասում էր նա, — դրա փոխարեն քրդերն ինձ ավելի լավ են վարձատրում, քան հայկական բեմը...

Մենք մեր ուղեկիցներին ձայն տվեցինք, որպեսզի նրանք մոտենան։ Առջևից քայլում էր Մալխասյանը, իսկ նրա ետևից վախեցածի նման գալիս էր Եկմալյանը։

— Իսկ... դրանց հետ վտանգավոր չէ՞ գործ ունենալ, — ասաց Եկմալյանը, ականարկելով քրդերին։

— Ի՞նչ եք ասում, — ծիծաղեց Վրույրը, — տեսնո՞ւմ եք, ինչպես են հագնված։ Նրանք այստեղ գալիս են ինչպես տոնակատարության։ Ինձ կախարդ են համարում, երբ ես նրանց նկարում եմ ու երկու-երեք ժամից իրենց եմ տալիս թղթի վրա պատկերված նկարը։ Քրդերը ինձ վարձատրում են փողով ու մթերքով։ Այսօր ես ձեզ կհյուրասիրեմ տապակած հավով։ Ինձ համար նրանք ոչխար էլ են բերել, իրենք էլ պետք է խորոված անեն։ Այսօր Անիում ես կլինեմ ձեր գիղը։

...Վրույրը մեզ ցույց տվեց ու անուններով կոչեց պահպանված շենքերն ու դրանց մնացորդները... Շուրջբոլոր փլուտակներ էին, նույնիսկ թագավորական պալատից շատ բան չէր պահպանվել, և երբեմնի Հայկական թագավորության մայրաքաղաքից կիսաքանդ շենքեր ու վանքեր էին ձնացել։ Զարմանալի էր, որ ամենից քիչ Մայր տաճարն էր ավերվել, որի կանգուն մնացած պատերը հպարտորեն իշխում էին մյուս ավերակների վրա։

— Հրաշալի է, — խանդավառվեց Ստեփանը, — սա համարյա բացառիկ բան է։ Մենք ծանոթ ենք Ակրոպոլի, հունական ու եգիպտական հուշարձանների հինավուրց ճարտարապետությանը, պեղումներ են կատարվում Պոմպեյում, սակայն երբեք և ոչ մի տեղ ես չեմ կարդացել ու չեմ լսել մեծ քաղաքների մասին, որոնց փլատակները մնան հողի երեսին յոթ դար շարունակ։ Եվ Եվրոպայում, և Ռուսաստանում կան ավելի հին վանքեր, բայց դրանք պահպանվել են այն պատճառով,

որ դրանք պահպանել են, չեն թույլ տվել կործանվելու, իսկ այստեղ ամեն ինչ դատապարտված է եղել խորտակման և, իհարկե, ոչ ոք որևէ միջոց ձեռք չի առել դրանք պահպանելու համար:

...Մտանք Վրույրի «լուսանկարչատունը»: Դա որմնախորշ էր, որը վերևից ծածկված էր մի մեծ տափակ քարով: Ամբողջ բարեհարմարությունը սահմանափակվում էր հատակին փռված մի ներքնակով. գլխի տակ նա սպիտակեղենի կապոցն էր դնում, ծածկվում աշնանային վերարկուով: Անկյունում հատակին սփռված էին երևակիչների սրվակներ, նկարներ լվանալու ամաններ ու լուսանկարչական արվեստին վերաբերող էլի ինչ-որ բաներ:

— Հարուստ չէ,— ասաց Վրույրը,— դրա փոխարեն շահավետ է, ես էլ, ընտանիքս էլ քաղցած չենք մնում:

Երեկոն իջնում էր, և Համոն եկավ հայտնելու, որ վերադառնալու ժամանակն է: Մալխասյանն ու Եկմալյանը դնացին դեպի հանրակառքը, ես դեռ զրուցում էի Վրույրի հետ, իսկ Ստեփանը, մտքերի մեջ խորասուզված, նստել էր մի քարի: Երբ Համոն մեզ ձայն տվեց, ես Վրույրին հրաժեշտ տվեցի ու մոտեցա Ստեփանին:

— Դու չես կարող պատկերացնել, թե ես այսօր ինչ ըզգացի,— ասաց նա,— ես միշտ սիրել եմ իմ ժողովրդին, բայց այսօր ամբողջ հոգով հայրենասեր դարձա: Անին ցույց տվեց, թե ինչքան մեծ, ինչքան կենսասեր է մեր ժողովուրդը: Ձի կարելի այդպիսի ժողովրդին չհարգել ու չսիրել: Ես հիմա այդ առանձնապես ուժեղ զգացի»¹:

Այո, այդպիսի կախարդիչ ուժ ունեն Անին՝ մեր նախնիների հրաշագեղ կերտվածքը, որ դեռևս պատանեկան տարիներից կլանեց Վրույրին նախ հեռակա կարգով (Հ. Քյուրքճյանի լուսանկարների միջոցով), իսկ հետագայում արդեն ոչ միայն մոտիկից տեսավ, շոշափեց նրա ավերակները, այլև դարձավ ավերակ մայրաքաղաքի մշտական բնակիչներից մեկը՝ իրավունք նվաճելով կոչվելու «Անեցի»²:

¹ Գ. Երիցյան, Հուշեր Ստեփան Շահումյանի կյանքից, Երևան, 1966 թ., էջ 58—61:

² Անիի գիտարշավի մասնակիցները միմյանց անվանում էին Անեցիներ:

Երբ 1908 թ. դեկտեմբերի 23-ին՝ Բաքվի նիկիտին եղբայրների «Ցիբկ» թատրոնում հանդիսավորությամբ նշվեց Արամ Վրույրի բեմական ու գրական գործունեության 25-ամյա հոբելյանը, բազմաթիվ նշանավոր մտավորականների թվում իր գործընկերոջը ողջուն էր հղել նաև Ն. Մառը հետևյալ բովանդակությամբ.

«Անեցին շնորհավորում է հոբելյար Անեցիին, ցանկանալով երկար տարիներ, միևնույն հոգեկան որոնումները, և հաջողություններ՝ նյութական լավագույն պայմաններում: Պրոֆեսոր Մառ»¹:

...Մառի բացակայության տարիներին իր Անվո գործունեության մասին Վրույրը նամակներով տեղյակ էր պահում հարգարժան գիտնականին, նրանից միաժամանակ ստանալով նորանոր հանձնարարություններ:

«Անցյալ տարվա օգոստոս ամսվա վերջին Անի էի գնացել,— 1903 թ.-ի հունվարի 23-ին Մառին հղած նամակում գրում է Վրույրը,— և նկարեցի բավականաչափ նրա տեսարաններից (ստերեոսկոպի համար), համոզված լինելով, որ ժամանակը յուր գործը կատարում է և ամեն մի րոպե կարող է նրա անչափ սիրելի և թանկագին նշխարներից մեկ-մեկ մաս գետին տապալել... Ցավում եմ, որ եղանակները վատացան և չկարողացա նկարել Ձեր կատարած անչափ հետաքրքիր պեղումների նկարները. այդ մասը մնում է այս ամառ, ուր մի ամսի չափ մտադիր եմ մնալ Անի՝ թե իբր ամառանոց և թե ավելի մանրամասն նկարելու համար...»²:

Լ. Բյուրքճյանի, Արամ և Արտաշես Վրույրների պահպանված լուսագրումները գիտաճանաչողական մեծ արժեք ունեն, քանի որ այդ պատկերները ոչ միայն հնարավորություն են տալիս հետազոտողին այսօր պատկերացում կազմել մեր սահմաններից դուրս գտնվող ճարտարապետական կոթողների դիրքի ու կառուցվածքային առանձնահատկությունների, նաև նյութական այլ արժեքների մասին, այլև դրանց մի զգալի մասը ժամանակի ընթացքում տարբեր պատճառներով կործանված կամ նախնական տեսքը կորցրած կա-

¹ «Հուշարար», 1908 թ., № 10, էջ 139:

² Նամակը պահվում է Ն. Մառի արխիվում:

ոււյցների՝ ներկայիս միակ վավերագրերն են։

Ստորև ուղում ենք հիշատակել մի շարք այդօրինակ կորուստների մասին։

Անիի տարածքում բազմաթիվ այլ լուսագրումներից բացի, Հ. Քյուրքճյանը վերարտադրել էր նաև Մանուչեի մզկիթի վրա եղած մի արձանագրությունը, որը դարասկզբին արդեն գոյություն չուներ։ Այդ առթիվ Արամ Վրույրը «Մշակի» էջերում գրում է. «Մի քանի օրեր առաջ այցելեցի Անի, և ամեն անգամ սրտատրոփ հետամուտ եմ եղել, թե ո՞ր մասից ինչ քարեր են պոկվել, նրա թանկագին հիշատակարաններից ո՞րն է պակասել, քայքայվել, կործանվել և կամ որի՞ն առավելապես սպառնում է կորուստ։ Մեծ ցավով նկատեցի անցյալ օգոստոս ամսի իմ այցելության ժամանակ, որ մըզկիթի փոխարկված շինության՝ արևմտյան պատը կործանված է. կործանված՝ և իր հետ անհետ կորած մի շատ թանկագին հիշատակարան։ Չինգիզխանների պարսկական հարստության հաջորդող Թեմուրիներին ներկայացուցիչ Աբու-սալիդ Բահատուր խանի անեցիներին տված արտոնությունների և առանձնաշնորհումների մի վկայությունը, որ հիշյալ պատի վրա քանդակված էր պարսիկ լեզվով... նա այլևս գոյություն չունի»²։

Նույն այդ հոգվածում Ա. Վրույրը նշում է, որ 1890 թ.-ին Անիում եղած ժամանակ ինքը նկատել էր այդ ուշագրավ արձանագրությունը, որի լուսատիպ պատճենը՝ կատարել էր իր վարպետ Հ. Քյուրքճյանը, պահվում է իր մոտ։ Այդ լուսանկարը այլ պատկերների հետ Վրույրը 1905 թ.-ին ուղարկել է Ն. Մառին, որի մասին նույն տարվա հունվարի 10-ին վերջինիս հղած նամակում գրում է. «Չգիտեմ Ձեզ պիտանի պիտի լինի՞ մզկիթի արձանագիրը, ունեցածս այդ էր, և շատ վաղուց է տպված, բայց պահում էի իբր հազվագյուտ իր»³։

Այսօր արդեն լուսանկարչական հազվագյուտ նմուշ է նաև Մայր տաճարի հարավարևելյան կողմում կառուցված Կատրանիդե թագուհու մատուռ-դամբարանի պատի կանգուն մը-

¹ Նոսր Լանուչեի մզկիթի մասին է։

² «Մշակ» 1903 թ., № 126։

³ Նամակը պահվում է Ն. Մառի արխիվում։

նացած փոքրիկ մի բեկորի պատկերը, որ ժամանակին նկարահանել են թե Քյուրքճյանը, և թե Վրույրը: Դարասկզբին այն արդեն կործանված էր:

Ս. Փրկիշ եկեղեցին ներկայումս կիսով չափ փլված է, մինչդեռ Վրույրը 1903 թ.-ին այն լուսագրել է կանգուն վիճակում:

Վրաց եկեղեցուց կանգուն էին մնացել երեք պատ, որոնք վերանորոգել է ն. Մառը: Այժմ կանգուն է հյուսիսային պատը, միայն, մյուսները կործանված են: Կոթողը դարասկզբի նախնական վիճակով լուսագրել է Վրույրը:

Կամ թեկուզ հիշատակենք Բագրատունյաց տոհմի Գագիկ Ա թագավորի արձանի մասին, որի հետքերը, ցավոք, այսօր չկան: Միջնադարյան ազգային քանդակագործական արվեստի այդ բացառիկ նմուշի մասին նույնպես գաղափար ենք կազմում Ա. Վրույրի շնորհիվ:

Կարելի է շարունակել նման կարգի փաստերի թվարկումը, սակայն բավարարվենք այսքանով:

* * *

Արամ Վրույրը Քյուրքճյանից ժառանգելով պատմական հուշարձանները լուսագրելու արվեստը, շահմանափակվեց լոկ պասսիվ լուսանկարչությամբ: Երկար տարիներ շրջագայելով Հայաստանի՝ պատմական հուշարձաններով հարուստ վայրերը (Անի, Զվարթնոց, Թալին, Գուգարք, Գառնի, Սյունիք, Շիրակ և այլուր), անձնական տեական ու տքնաջան զննումների շնորհիվ այնքան հմտացավ հնագիտության բնագավառում, որ սկսած 1892 թվականից արժանացավ ն. Մառի վստահությանը, դառնալով նրա ամենաակտիվ ու հարատև գործընկերներից մեկը Անին պեղելու քսանամյա ամբողջ ժամանակաընթացքում:

Հատկանշական է նաև այն, որ Վրույրը պատմական հուշարձանների լուսագրմանը զուգընթաց մամուլի էջերում պարբերաբար հանդես է եկել հնագիտությանը նվիրված բազմաթիվ հոդվածներով և ուսումնասիրություններով, որոնք տաղանդավոր արվեստագետի մտահորիզոնի լայն ընդգրկումների պերճախոս ապացույցն են: Դրանք միաժամանակ Վրույրին

բնորոշում են որպէս հայրենասերի, իր ժողովրդի մշակութի
պահպանման հոգսերով ապրող քաղաքացու:

Երբ շուրջ տասնամյա ընդմիջումից հետո ն. Մատը
1904 թ.-ին կրկին ձեռնամուխ եղավ շարունակել Անիում
սկսված պեղումները, Ա. Վրույրը առաջիններից մեկն էր, որ
մամուլի միջոցով արձագանքեց բերկրալի այդ իրողությանը:

«...նա (Մատը—Ռ. Փ.) հաստատապէս որոշեց այս տար-
վանից սկսած, պարբերաբար շարունակել Անին պեղելու
լուրջ և ծանր գործը,— գրում է Վրույրը:— Լուրջ և ծանր ենք
անվանում այդ գործը, նույնիսկ տաժանակիր: Գրանում հա-
մոզվելու համար պետք է մի կես ժամ գոնե ներկա լինել
պեղումներին: Դուք կանգնած եք ամառվա կիզիչ արեգակի
տակ, լերկ քարակույտների մեջ. քսանի շափ մշակներ փորում
են հողը, և հող ու քար դեն ածում: Այդ մշակների գլխին
հսկում է մի մարդ, ձեռքին սև հովանոց, արևակեղ դեմքով,
իսկ զգեստն ու մազերը պեղումներից բարձրացած թանձր
փոշով ծածկված. դա է պրոֆեսոր պ. Մառ կամ «աղան»
ինչպէս անվանում են նրան մշակները: Հանձին պ. Մառի
հայ դպրությունը և հնագիտությունն ունի մի անխոնջ և ան-
փոխարինելի գործիչ. լույսը բացվելուն պէս նա օտքի վրա
է, և պեղումների գործը ժամը 6-ին վերջացնելով, սկսում է
գրի առնել իր նույն օրվա գտածները և մանրամասն ու սխա-
տեմատիկաբար ցուցակագրել:

...Այս տարվա պեղումները սկսած են այն տեղի մոտից,
որ վերջանում են Աշոտյան ամրությունները:

...Ինչպէս հիշեցինք, պեղումները կատարող մշակների
գլխին հսկում է անձամբ՝ պ. Մառ, մի ամբողջ ամիս, առանց
մի րոպե իր գործի վրայից հեռանալու. յուրաքանչյուր մշակ
իր գտած իրը, որքան էլ նա իր կարծիքով աննշան լինի,
սլարտավոր է ներկայացնել պ. պրոֆեսորին ու որեէ բան
շթաքցնելու համար. ինքնաբերաբար հայ մշակները հսկում
են թուրքերին և փոխադարձաբար թուրքերն էլ հայերին: Բայց
այս բոլոր գտնված իրեղենները պետք էր խնամքով պահ-
պանել, ապա թե ոչ կորստյան կմատնվեին, ինչպէս եղան
1892—93 թվերին իր գտած հետաքրքիր քանդակներից և ար-
ձանագրության բեկորներից շատերը... Հենց այս ի նկատի
ունենալով՝ պ. Մառ սկզբից որոշել էր Անիի մեջ մի թան-

գարան հաստատել, ուր հավաքվեին պեղումներից գտնված
զանազան իրեղենները, որ հետաքրքիր այցելուին որոշ գա-
ղափար տալին այդ քաղաքի անցյալի մասին, և պեղումնե-
րի հետ միաժամանակ ձեռնարկեց թանգարանի շինության:
Առայժմ մեծ ծախսերից խուսափելու համար, մզկիթի՝ շի-
նությունը թանգարանի է վերածված, և հենց այդ առիթով էլ
իր խարխուլ և փուլ գալու ենթակա տեղերը ամրացած ու
նորոգված. այսպիսով իր դռնով ու ապակյա լուսամուտնե-
րով մի փոքրիկ թանգարան է մզկիթը՝ բախտավորագույնը
Անիի շինություններից, ուր դասավորված են շատ կանո-
նավոր կերպով պ. Մառի գտած բոլոր իրեղենները²: Բայց
այս և պեղումների մի քանի հետաքրքիր հետևանքների մա-
սին մի այլ անգամ»³:

Վրույրը ընթերցողին երկար սպասեցնել չի տալիս. այդ
տարվա պեղումներն ավարտվելուց հետո «Մշակի» էջերում
հանդես է գալիս «Անիի պեղումների հետևանքները» խորա-
գրով ծավալուն մի հոդվածով⁴:

Հոդվածը լայն արձագանք է գտնում: Այն փաստը,
որ Մխիթարյանների միաբանության «Հանդես ամսօրյա»
պարբերականը արտատպում է իր էջերում, վկայում է նրա
կարևորության մասին: Ահա թե ինչ է գրում այդ առթիվ
պարբերականը՝ որպես ծանուցում արտատպվող հոդվածի.

«Մշակ իր 241 թվին մեջ Ա. Վրույրի գրչեն ելած ուշա-
գրավ հոդված մը ունի, որ շատ հետաքրքրական ըլլալուն
պատճառով զայն ամբողջովին կարտագրենք հոս»⁵:

Անիի հուշարձանների ժողովածուն ստեղծելուն զուգընթաց,
Ա. Վրույրը նպատակ է ունեցել գրելու Բագրատունյաց մայ-
րաքաղաքի պատմությունը: Այդ առթիվ Մառին հղած նա-
մակներից մեկում մասնավորապես գրում է.

¹ Խոսքը Մանուչեի մզկիթի մասին է, որ Մառը վերածեց թանգարանի:

² 1909—1910 թթ. Անիում հանգանակությամբ կառուցվեց 2 շենք
ևս՝ մեկը գիտարշավի անդամների համար որպես բնակարան, մյուսը
որպես քարեղարան (լապեղարիում):

³ «Մշակ», 1904 թ., № 157:

⁴ «Մշակ», 1904 թ., № 241:

⁵ «Հանդես ամսօրյա», 1904 թ., № 12:

«...Բայց որպեսզի հասարակությունը ավելի գիտակցաբար վերաբերվի իմ պատկերների ժողովածուին, անհրաժեշտ համարեցի նաև կազմել Անիի համառոտ պատմությունը: Թեև սա շատ բարձր էր իմ ուժերից, բայց ստիպված էի կատարել, որովհետև իմ շրջանում չի գտնված մեկը, որ այդ գործը ինձ չափ սիրեր: Գրվածքը ավարտելուց հետո անմիջապես պիտի թարգմանվի նաև ռուսերեն: Այդ գրքույկը կազմելու համար ես օգտվել եմ բոլոր մեր ծանոթ աղբյուրներեն: Լսել եմ նաև, որ դուք ևս ունեք աշխատություն Անվո մասին, բայց ինձ հայտնի չէ, թե տպված է մի որևէ ամսագրում, թե՞ առանձին գրքույկով¹: Որպեսզի հնար եղածին չափ լրիվ լինի իմ գործս, ցանկալի էր, որ ձեր կարծիքներն էլ տեղավորվեին այնտեղ, քանի որ մեր ծանոթ գիտնականներից ոչ ոք այնպես լուրջ կերպով չի ուսումնասիրած մեր սիրեցյալ Անին, որքան դուք, հարգելի պրոֆեսոր: Հուսամ կբարեհաճեք ինձ մատնացույց անել Ձեր աշխատության ուր տպված լինելը և կթույլատրեք նրանից օգտվել: Ցավում եմ, որ դեռ բոլորովին վերջացած չէ գործս և հնար չունեմ մի կոլեկցիա ձեզ ուղարկելու: Այդ կլինի ժամանակին: Իսկ առայժմ ուղարկում եմ Ձեզ իմ գործի մի քանի նմուշները, ցանկանալով իմանալ նրա մասին Ձեր կարծիքը»²:

Ա. Վրույրը, ցավոք, չի ավարտել ու հրատարակել այդ աշխատությունը, սակայն ձեռագիր վիճակում պահպանվել են որոշ էջեր դրանից: Հայտնի է, որ Վրույրը բազմիցս հանդես է եկել դասախոսություններով՝ Անիի պատմության վերաբերյալ:

Թե ինչպիսի կառուցվածք ունեն նրա դասախոսությունը, պատկերացում է տալիս տպագրված մի ծրագիր, որը պահ-

¹ Խոսքը վերաբերում է Ն. Մառի «Ани, столица древней Армении (историко-археологический очерк)» աշխատությանը, որը տպագրված է 1898-ին, «Братская помощь пострадавшим в Турции армянам» ժողովածուի երկրորդ հրատարակության էջերում: Այստեղ, հենվելով երկու տարվա (1892—93 թթ.) պեղումների արդյունքների և մատենագրական տեղեկությունների վրա, Ն. Մառը ուրվագծել է Անիի կենդանի պատկերը, հատուկ տեղ տրամադրելով ճարտարապետական կոթողներին:

² Նամակը գրվել է 1903-ի հունվարի 23-ին, պահվում է Մառի արխիվում:

պանվում է Ն. Զարենցի անվան գրականության և արվեստի
թանգարանի՝ Ա. Վրույրի արխիվում: Այդ դասախոսությունը
կայացել է 1909 թվականին՝ Պոլսում, ուր Արամ Վրույրը
Հյուրախաղերի էր մեկնել Գրիգոր Ավետյանի ղեկավարած
թատերախմբի կազմում:

Ահա ծրագրի բովանդակությունը.

«Ս. Պետերբուրգի կայսերական հնագիտական մասնաժողովի աշխատակից

Ա. ՎՐՈՒՅՐ

Անի քաղաքի անցյալի և ներկայի մասին պիտի բանա-
խոսե հետևյալ բովանդակությամբ

Ա.

Անիի աշխարհագրական դիրքը և քաղաքատեղը: Անին
պատմության մեջ հիշատակվելուց մինչև Բագրատունիների
ձեռքը անցնելը: Բագրատունի թագավորները և նրանց
հարաբերությունը Բյուզանդական կայսրերի և Բաղդադի
ամիրապետների հետ. նրանց անկումը: Անիի աս-
տիճանական զարգացումը: Հազարումեկ եկեղեցիները առաս-
պել՝ են, թե իրողություն: Կուսակցական պայքարներ և Հու-
նաց տիրապետությունից մինչև Զաքարե սպասալարից Անիի
գրավումը:

Բ.

Զաքարյան շրջան: Անիի անօրինակ ծաղկումն ու ճոխու-
թյունը: Վրացիք և նրանց տիրապետության ազդեցությունը
Անվո վերա: Թաթարաց արշավանքը և Անվո աստիճանական
անկումը: Էրուստայիտ Բեհատուր խանի հրովարտակը Անվո
մզկիթին վրա: Անին իբրև արվեստների և առևտրի կենտրոն:
Պատմագիրներ և ճանապարհորդներ Անիի մասին:

Գ.

Անին լքված. ի՞նչ է ներկայացնում նա այս րոպեիս: Անիի
նորագույն պատմությունը: Լուսանկարիչ Քյուրքճյան: Պրո-
ֆեսոր-ակադեմիկ Ն. Մառ, նրա պեղումները և Անիի անժանոթ
պատմության նորագույն և հետաքրքրաշարժ տեղեկություն-



Արամ Վրույր

ներ: Ս. Գրիգորի պեղումները և Գագիկ թագավորի արձանի
գյուտը: Միջնաբերդ, Անեցվոց նիստ ու կացր: Պարիսպների
և բնակարանների կազմությունը, թմբկություն, Անեցիք իբր
օրենսդիրներ: Ճարտարապետ Թ. Թորամանյան, նրա գործերը
և դրանց նշանակությունը հայ արվեստի նկատմամբ: Իմ
անձնական ֆենությունը Անվո պարիսպների վրա: Պարսիկ
բանաստեղծությունը և Անվո ամբույթյունները: Վերջին խոսք:

Գասախոսությունը ավելի դյուրամբռնելի լինելու համար
մոգական լապտերով ցույց պիտի արվին մի շարք պատկեր-
ներ»:

Այս վավերագիրը հավաստի վկայությունն է այն մասին,
թե որքան հիմնավոր ու մանրամասն գիտեր Վրույրը Անիի
պատմությունը, մի հանգամանք, որով պայմանավորված էր
նրա գործնական մասնակցությունը պեղումներին՝ ոչ միայն
«րպես լուսանկարիչ»...

* * *

Վրույրի գիտական հիմնավոր գիտելիքների անդրանիկ
լուրջ արտահայտությունը ս. Գրիգոր (Գագկաշեն) եկեղեցու
հայտնաբերման գործում ունեցած ակտիվ միջամտությունն
էր, որով ընդգետնյա «կապանքներից» մեկընդմիշտ ազա-
տագրվեց Գագիկ Ա. Բագրատունու պատվերով կառուցված
կոթողը, նոր լույս սփռելով միջնադարյան ազգային մշա-
կույթի ու ճարտարապետության պատմության մի շարք սովե-
րոտ էջերի վրա:

Հայ ճարտարապետական արվեստի այդ յուրօրինակ կերտ-
վածքը, որը Թորոս Թորամանյանի բնորոշմամբ՝ Անիի Մայր
տաճարի հետ կազմում է ազգային ճարտարապետության «եր-
րորդ վերածնության գլուխգործոցներից մեկը», իր նախա-
տիպի՝ Զվարթնոցի նման «ճակատագիր» է ապրել. հարյուր-
ամյակներ շարունակ գտնվելով ստորգետնյա շերտերում,
կրկին լույս աշխարհ է հանվել՝ այս անգամ արդեն ավերակ
տեսքով, և իր պերճապերճ բեկորներով հաստատել է ոչ
միայն մեր ճարտարապետության, այլև քանդակագործու-
թյան բազմերանգությունը:

Գագկաշենի պեղումները սկսվեցին 1905 թ. հունիսի

նըվեին ներսեսի կառուցած տաճարի պատճենի մնացորդները»¹։

Իսկ թե ի՞նչ հանգամանքներ են թելադրել Ա. Վրույրին, որոշելու համար, թե Մաղկոցաձորի 9 մետրանոց հողաթումբըն է իր մեջ իրոք պարունակում Գազկաշենի ավերակները, հանգամանորեն շարադրված են «Մշակ» թերթի էջերում Ա. Վրույրի հեղինակությամբ տպագրված «Անիի ներկա վիճակը (լուսանկարողի հիշողություներին)» խորագրով հոդվածում², ինչպես նաև պեղումներից հետո նրա իսկ գրած «Պրոֆեսոր Ն. Մառի պեղումները և աշխատանք Անիում 1905—6 թթ.» հնագիտական ուսումնասիրության մեջ, որը տպագրվել է Ա. Վրույրի խմբագրությամբ հրատարակվող «Հուշարար» հանդեսում³։

Դեռևս 1903 թվականին, անդրադառնալով հնագիտությանը հուզող այն հարցին, թե, ի վերջո, որտե՞ղ, Անի քաղաքի կոնկրետ ո՞ր հատվածում պետք է որոնել Գազկաշենի ավերակները, Ա. Վրույրը գրում է. «Անին մի աննման թանգարան է, մի շատ ուսանելի դպրոց, որի շատ մութ մասերի հետազոտությունը ապագային է թողնված։ Բայց ես սիրում եմ նայել, քննել, առանց սակայն խուզարկողի հավակնությունն ունենալու։ Օդը ամպոտ է. Ալաջայի գլխին կուտակված են գորշ, ծրարված ամպեր, որոնք սպառնալի բազմել են նրա գլխին. ամեն ընդհատում է մի սարսափելի կարկուտ. արդեն հեռվից խուլ կերպով լսվում է որոտման բամբյունը և այդ ընդհանուր գորշ գույնը միայն կայծակն է երբեմն լուսավորում՝ մի ականթարթի համար իբրև հատուկ տարօրինակ զիզագաներ գծելով այդ գորշության վրա։ Անհարմար էր որևէ լուսանկարչական պարապմունք, և ես ինքս ինձ հարց տվի, ո՞րն է արդյոք այս ավերակների մեջ այն տաճարի տեղը կամ մնացորդը, որ շինեց Գազիկ Ա., ընդօրինակելով էջմիածնի մոտ այժմ պեղված Զվարթնոց եկեղեցու ճարտարապետությունը... Մեր պատմագիրները խոսք չեն գտնում գտելու Գազիկի շինած այդ տաճարը. իսկ տեղի մասին բավականանում են հիշելով «Ի կուսե Մաղկոցաձո-

¹ Н. Марр. Ани, էջ 55։

² «Մշակ», 1903 թ., № 126։

³ «Հուշարար», 1907 թ., № 6, էջ 84—88։

րոյ»... և ես որոշեցի միջնաբերդի ստորոտից սկսած ամբողջ Մաղկոցաձորի երկարությունը անցնել, ամեն մի քարակույտ խնամքով զննելով: Որովհետև մի քանի անգամներ այցելել և շատ մանրամասն լուսանկարել էր Զվարթնոց եկեղեցին, այդ պատճառով էլ ինձ հայտնի էին ոչ միայն նրա ընդհանուր ճարտարապետության պարագաները, այլևս նրա ներքին և արտաքին քանդակների յուրաքանչյուր մասը:

Հասա մինչև Ապուղամրենց ս. Գրիգորը, որ ուղղակի Մաղկոցաձորի բարձրության վրա ամուր նստած՝ դիտում է ձորը: Մինչ այդտեղ, Մաղկոցաձորի ամբողջ երկարությունը կրում է կամ շատ աննշան շենքերի հետքեր և կամ փոքրիկ եկեղեցիների հիմքեր, որոնցով ծածկված է համարյա ամբողջ քաղաքի մակերևույթը: Ս. Գրիգորի՝ մոտից քարակույտերը մեծանում և բազմանում են. շատ եմ մոտ արքունի պալատ համարվող շինության և կանգ եմ առնում մի շատ խոշոր, բլուրի նման քաղաքի այդ կողմ բարձրացող ավերակների կույտի առաջ: Բայց ի՞նչ կույտ. հսկաների ձեռքեր են կերտել կարծեք քարերի ու կրի այդ ահագին մեծամեծ բեկորներն ու զանգվածները, բայց չգիտեմ ինչ գերբնական զորություն տալն ու վրա է արել, ջախջախել, խորտակել և կուտակելով միմյանց վրա խառնուփնթոր մի բլուր է ձևացրել. քաղաքում գտնված ավերակների ամենամեծ կույտն է դա:

Ամեն անգամ Անին այցելելիս կանգ էին առել այդ ավերակների կույտի առաջ. երևում էր մի մեծագործ շենքի խրդճալի մնացորդը: Բայց այս անգամ... այս անգամ ես նախապատրաստված էի: Անիի մասին գրող ամեն մի պատմագիր, նրա մասին գրված ծանոթ գրական աշխատությունները, հիշատակարանները, այդ բոլորը քիչ շատ ինձ ծանոթ էին...

— «Ի կուսե Մաղկոցաձորոյ», — մրմնջում էին շարունակ ինձ մեր պատմագիրները... «Ի կուսե Մաղկոցաձորոյ»...

¹ Ի դեպ, Անիում կային մի քանի ս. Գրիգոր կոչվող եկեղեցիներ, ուստի դրանք տարբերելու համար հիշատակվում են պատվիրատու թագավորների կամ իշխանների անուններով: Այսպես, Տիգրան Հոնենց ս. Գրիգոր, Ապուղամրենց ս. Գրիգոր, Գագկաշեն ս. Գրիգոր և այլն: Հավանաբար հենց այդ ս. Գրիգոր անվանումն է պատճառ դարձել, որ ժամանակին Բրոսսեն Գագկաշենը շփոթել է Ապուղամրենցի հետ:

և ես այդ քարակույտերի ստորոտից քայլերս ուղղեցի դեպի
Ծաղկոցաձոր. ուղիղ 35 քայլ... Ուրեմն, «Ի կուսե Ծաղկոցա-
ձորոյ» այդ անվիճելի է. բայց մի նշան, մի շոշափելի փաստ,
որ դա է Գազկաշեն մեծագործ տաճարի ավերակները, որի
մասին ծերունի Ալիշան հուսահատ գոչում է, թե «տեղն ան-
գամ հայտնի չէ»... Ավերակների այդ կույտի արևելակողմը
սյունի նման կանգուն մնում է մի պատի մնացորդ, որ մոտ
է քայքայման, որոշ երևում է մի դռան հետք. հյուսիսային
կողմում նույնպես մի պատի մնացորդ, ավերակներից մի քա-
նի քայլ հեռու. դարձյալ նրա մոտ մի ձիթահանք, Անիի տա-
ճարների այդ անբաժան ընկերը, և ուրիշ ոչինչ. ոչ մի քան-
գակ, ոչ մի որոշ նշան:

Բարձրանում եմ անձև ու անկանոն իրար վրա թափված
այդ զանգվածների գագաթը. որքան մեծ էր իմ ուրախու-
թյունը. ահա մի սև որձաքարե կլորակ սյան գլուխ, հար
և նման Զվարթնոց եկեղեցու պեղումներից գտնվածներին,
ունի նրա գլխի զարդերի նմանը, միայն առանց հունարեն
տառերի և ոչ շատ խոր տաշված. այդ խոշոր զանգվածներից
բավական քարձր կանգնած են տաճարի շորս հիմնական խա-
րիսխների գլուխները, որոնց մեկի վրայից ընկած էր հիշ-
յալ գլուխը, և ահա մեկն էլ, ավելի հեռուն, ստորոտում ըն-
կած, որի զարդարուն մասերը մի որևէ բարբարոսի ձեռքով
կտրատված են... Այլևս տարակուսելի տեղի չկար. գտնված
էին Գազկաշեն տաճարի ավերակները, որ հար և նման է
Զվարթնոց եկեղեցուն: Հաջորդ օրը եղանակը պարզ էր, և ես
խնամքով լուսանկարեցի իմ տեսած սյան խոյակը՝ առաջուց
որքան կարելի է նրա քանդակները ծածկող խոտերն ու քա-
րերը հեռացնելով:

Հետաքրքիր է պեղումներ կատարել այդտեղ¹:

Խորհրդավոր այդ հողաթմբի բեկորների լուսանկարները
Ա. Վրույրը այնուհետև ցույց է տալիս Թ. Թորամանյանին
և Խաչիկ վ. Դադյանին: Վերջինս դեռևս 1901-ին սկսել էր
Զվարթնոցի պեղումները, իսկ 1904-ից այդ գործին գործուն
մասնակցություն էր ունեցել նաև Թ. Թորամանյանը, որ
1905-ին ստեղծեց տաճարի գիտական վերակազմությունը:

¹ «Մշակ», 1903 թ., № 126:

«Երկու գիտակ անձերն էլ հաստատել են իմ կարծիքը,—
գրում է Վրույրը— Անիի պարծանքը կազմող շենքերից մե-
կի տեղն էլ աներկբայապես որոշված էր, որի օժանդակն էին
եղած Զվարթնոցի պեղումները»¹:

Գազկաշենի պեղումներով (1905—1906 թթ.) իրենց լու-
ծումը ստացան ազգային ճարտարապետության միջնադար-
յան շրջանի մի շարք կնճռոտ հարցեր, որոնք էական նշա-
նակություն ունեցան նաև հայ մշակույթի, մասնավորապես
քանդակագործության (նկատի ունենք Գազիկ Ա. Թագավորի
արձանը) առանձնահատկությունների պարզաբանման իմաս-
տով:

1906 թ.-ին Գազկաշենի ավերակներից հայտնաբերվեց
Գազիկ Ա. Թագավորի քարակերտ արձանը՝ 2,26 մետր բարձ-
րությամբ: «Շենքի փլուզման ժամանակ արձանը փշուր-
փշուր էր եղել՝ վերածվելով քառասունութ կտորի: Բարեբախ-
տաբար, արքայի գլուխը մնացել էր անվնաս:

Անիի գիտարշավի անդամ, նկարիչ Պոլտարացկու հմուտ
ձեռքերը արձանի կտորները ի մի հավաքելով ամբողջացրին
նրան, որը իր պատվավոր տեղն էր գտել Անիի Հնադարա-
նում»²:

Արձանի մանրամասն նկարագիրը՝ սեփական հետևու-
թյուններով, շարադրել է Թ. Թորամանյանը: «Արձանագործը
շինել է Գազիկ Ա.-ի արձանը, ըստ ընկալյալ սովորության,
եկեղեցիի պատին վրա զետեղելու համար, ձեռքը բռնած իր
շինության քարաշեն մանրանկարը»³,— գրում է Թ. Թորաման-
յանը:— Այս արձանը... իր տեսակի մեջ միակը կարելի է
համարել ամբողջ Հայաստանի և Կովկասի քրիստոնեական
շրջանի մեջ, թե իր մեծությամբ, և թե մինչև այժմ տեսնված
ողորմելի գծերով մանր-մունր արձաններու հետ բաղդատե-
լով:

Արվեստագետը Գազիկի արձանի վրա ամեն ջանք ի գործ
դրած է թե դեմքին և թե հագուստներուն ամենափոքր գծերն

¹ «Հուշարար», 1907 թ., № 6, էջ 85:

² Արտաշես Վրույր, Անիում, Երևան, 1979 թ., էջ 83:

³ Դա էական նշանակություն ունեցավ այն իմաստով, որ հաստատեց
Թ. Թորամանյանի առաջարկած Զվարթնոցի վերակազմության նախագծի
ճշմարտացիությունը:

խակ բնականին մոտեցնելու, ահա երեցող ճիգն է, որ տես-
նողին վրա մեծ տպավորութիւն կթողու... մեզ համար բո-
լորովին անծանոթ է հին հայոց տարազը, թերեւ նոր պեղումներ
տան այդ ցանկալի նորութիւնը, այս արձանով գոնե ճշտիվ
հասկցանք Բագրատունի թագավորներու ոմանց տարազը...
Գլուխը դրած է Բաղդադի խալիֆայական պատվանշան ար-
քայական սպիտակ շաւման. երկար սև մազերը կհասնին
գրեթե մինչև ուսերը՝ խուրձ-խուրձ իջած և դեպի վեր ոլոր-
ված՝ հին սասանյան ձևով, դեմքը լայն, աչքերը խոշոր,
թավ հոնքերով, սև պեխերը ոլորված դեպի վեր, մասամբ
խառնված է թավամազ մորուքի հետ՝ որն որ կծածկե կուրծ-
քին կեսին ավելին: Կոնակը հագած է արքայական կարմիր
գույներով վերարկու մը՝ որուն լայն օձիքը ծալված է ուսե-
րուն վրա. վերարկուին ետևի քղանցքը ճեղքված մինչև մեջ-
քին մոտ... Կուրծքեն վար ալ միայն մեկ տեղ կոճկված ունի,
մյուս տեղերը թողնված է ազատ՝ որպեսզի երևա վիզեն կախ-
ված խաշը և նմանապես կարմիր գույնով մինչև ոտքերը
հասնող պարեգուտը: Առանց կուրծքը կախված խաշին ան-
կարելի պիտի ըլլար այս քրիստոնյա թագավորը զանազա-
նել մահմեդական վեհապետե մը:

Քանդակագործը իր ճարտարութեամբ ճարտարապետին
հսկա գաղափարը պճնազարդելու համար, անխնա թափեր է
այնտեղ գեղեցկատեսիլ քանդակներու մի ճոխ այլազանու-
թիւն»¹:

Գագիկ արքայի շաւմայի հավաստի բացատրութիւնը տվել
է Ն. Մառը պեղումների իր հաշվետվութեան մեջ, ըստ որի՝
շաւման Բագրատունի թագավորներին է անցել արաբներից և
մոտավորապես համազոր է եղել արքայական թագին: Այդ
նույն հաշվետվութեան մեջ Մառը առաջին անգամ հրատա-
րակեց Թ. Թորամանյանի կազմած Գագիկաշեն տաճարի վե-
րակազմութեան նախագիծը:

Գագիկ թագավորի արձանի իր արած լուսանկարը հրա-
պարակելու համար Ա. Վրույրը խնդրում է Մառի թույլատվու-
թիւնը: «Ես՝ իբր հայ գեղարվեստի նմուշ, այդ կամենում էի

իրր պրեմիա տալ իմ բաժանորդներին¹: Այդ մասին տպաստւում եմ Ձեր հրամանին»²:

Մառին հղած իր հաջորդ նամակում (գրված 1907 թ. փեփրվարի 19-ին), Վրույրը կրկին հիշեցնում է Գազիկի արձանի լուսանկարի հրապարակման թույլտվության մասին. «Ձեռնարկել եմ հրատարակել մի գեղարվեստական-գրական-թատերական թերթ, որի երախայրիքը, № 1 պատիվ ունեւմ Ձեզ հղելու³: Նա ունի շատ պակասություններ, բայց ո՞ր այդտեսակ սկսված գործը եղել է կատարյալ: Ինձ շատ գնահատելի է Ձեր երբեմնի աշխատակցությունը, Կովկասյան, մասնավանդ Անիի արվեստների մասին Ձեր հետաքրքիր նկատողություններից, թեկուզ ուսերեն: Կթարգմանենք: Նաև ես նորից եմ թույլտվություն խնդրում (անշուշտ, կարգացած էք Ձեր զեկուցումը) տպել Գազիկի պատկերը մեր թերթում, մասնավանդ, ես համառոտ մի բան եմ գրել 1906 թ. Անիում Ձեր կատարած աշխատությանց մասին: Այդ առթիվ պետք է պատկերի հրատարակումը»:

Մառի թույլտվությունից հետո Վրույրը Գազիկի արձանի պատկերը նախ հրատարակում է մեծագիր շափով, վիմատիպ, որի մի նմուշը ներկայումս պահվում է ՀԽՍՀ պետական պատմության թանգարանում, իսկ այնուհետև տպագրում «Հուշարարի» 1907-ի № 6-ում՝ իր «Պրոֆեսոր Ն. Մառի պեղումները և աշխատանք Անիում 1905—06 թթ.» խորագրով հոդվածի հետ միասին:

* * *

«Մեծարգո բարեկամ Նիկողայ Յակովլևիչ: Չնայելով իմ անշափ հետաքրքրության՝ դեպի անաց աշխարհը կատարած ուղևորության հետևանքների վերաբերմամբ, այնուամենայնիվ մինչև օրս անկարող եղա հարցնել այդ մասին երկտողով՝ վարածս աստանդական և անբնական կյանքիս պատճառով:

¹ Ակնարկում է «Հուշարար» պարբերականը:

² Նամակը գրվել է 1907 թ. հունվորի վերջերին կամ փետրվարի սկզբներին: Այն պահվում է Մառի արխիվում:

⁴ «Հուշարար» հանդեսի անդրանիկ համարը լույս է տեսել 1907 թ. փետրվարի 16-ին Թիֆլիսում:

շաբաթվա մեջ ստիպված էի 1—2—3 տեղ փոխել և այդ տեղերում ներկայացումներ կազմակերպել, որը կլանում էր իմ ամբողջ եռանդս և ժամանակս:

Ձեզանից բաժանվելուց հետո գնացել եմ Սարեղամիշ, իսկ այնտեղից նետվել մինչ Զուղա, ոտքի տակ եմ տվել Արարատյան դաշտի բոլոր կայարանները: Զարմանքով տեսել եմ Դավալու (Այժմ՝ Արարատ—Ռ. Փ.) գյուղի տներից մեկի գլխավոր մուտքի վրա իբր զարդ դրած Գառնիի խոյակներից մեկը¹:

Անշափ հետաքրքիր է Զուղան, մի փոքրիկ Անի, և կարծես ավելի ճոխ պահեստ 14—15-րդ դարերի իրեղենների:

Նամակում՝ գրված Բաքվից 1912 թ. ապրիլի 4-ին, Զուղայի մասին Վրույրի հայտնած տեղեկությունները չէր կարող անուշադրության մատնել Մառը: Երեք տարի անց՝ Անիում պեղումները ավարտվելուց հետո, Մառի հանձնարարությամբ Ա. Վրույրը մեկնում է Հին Զուղա: Դրա արդյունքը եղավ Հին Զուղայի գերեզմանատան 115 խաչքարերի լուսագրումը և Վրույրի գրած «Զուղա» խորագրով հնագիտական ուսումնասիրությունը, որը տպագրվեց մեր օրերում՝ «Պատմաբանասիրական հանդեսի» 1967 թ. № 4-ում (էջ 170—180):

Մեկնելուց առաջ Վրույրը Մառին գրում է. «Ժամանակին նկարեցի Թալինը² և այստեղ ճանապարհի և ուտեստի պատրաստություն եմ տեսնում դեպի Զուղա, ուր կուղևորվեմ 6—7-ին ամսույս³, թեև ասում են այնտեղ խոլերա կա, բայց ինչ արած... Մանրամասն նամակ և պատկերները՝ Զուղայից»⁴:

«Ակադեմիկոս Մառը, երբ որոշեց իր Անիի պեղումների սահմաններն ընդարձակել և կազմեց Անիի ինստիտուտի լայն ծրագիրը, որոշեց այն դարձնել հայկական աշխարհի

¹ Այդ խոյակը այժմ իր տեղն է գտել Գառնիի վերականգնված տաճարում:

² Ակնարկում է Թալինի՝ VII դարի ճարտարապետական հուշարձանը:

³ Վրույրը իր Արա որդու հետ Հին Զուղա հասավ 1915 թ. սեպտեմբերի 9-ին:

⁴ Նամակը գրված է 1915 թ. սեպտեմբերի 4-ին: Այն պահվում է Ն. Մառի արխիվում:

հետխոսակամ-գիտակամ աշխատանքների կենտրոնավայր։ Այդ օրվանից էլ աշխատանքները հեռագհատե ընդարձակվեցին գեպի Գառնի, Դվին, գեպի Վիշապաղունների սահմանները (Աժդահայուրտի), Թալին, Հաղպատ-Սանահին, Վան և այլն։ Սորանցից մեկի՝ Հին Զուղայի, գլխավորաբար նրա գերեզմանատեղի և տեղացիների մեջ՝ այդ տեղահանված գյուղաքաղաքի մասին մնացած ավանդությունները հավաքելն ու հիշատակարանների լուսանկարելը ինձ հանձնվեց։ Եվ ես Անիի ամառային լուսանկարչական աշխատանքները ավարտելուց հետո՝ 1915 թ. սեպտեմբեր ամսի սկզբները իմ Արա որդու հետ ուղևորվեցի գեպի Զուլֆա երկաթուղու կայարանը և այնտեղից մոտ շորս վերստ հեռուն գտնվող Հին Զուղա գյուղը, որ համանուն ավերակ գյուղաքաղաքից գրտնրվում է քիչ հեռու, նրա արևելյան կողմը¹։

Հին Զուղա ուղևորվելու նպատակը պարզաբանելուց բացի, Ա. Վրույրը անդրադառնում է նաև այն շարժառիթներին, որոնք թելադրեցին իրեն գրելու «Զուղա» ուսումնասիրությունը։

«Ես շատ էի ցանկանում, որ Զուղայի մասին ընդհանրապես և նրա խաչքարերի մասին մասնավորապես ավելի ձեռնհաս անձն հանձն առնեի գրել մի ամփոփ տեսություն, բայց հակառակ իմ արած դիմումներին մինչ օրս այդպիսի մի գործի ոչ ոք չձեռնարկեց, իսկ ինձ համար շատ ցանկալի էր, որ մի ժամանակ իր հարստությամբ անշափ հռչակ հանած այդ «քաղաքը», ինչպես հորջորջում են իրենք, ջուղայեցիք, շմնար մենակ, իր բազմաթիվ գեղաբանդակ խաչքարերով, այլ գրի առնվեին այն հատուկտոր ավանդությունները, որ ցրված են տեղացվոց մեջ, որոնք դարեր հոլովվելով կորել-նվազել և հազիվ մի քանի առասպելանման անցքեր պատմվում են մեր օրերը»²։

Ի դեպ, Զուղա անվան ծագման մասին ավանդությունը, որը գրի է առել Ա. Վրույրը, հենվելով տեղի բնակիչների պատմածի վրա, օգտագործել է Արամ Ղանալանյանը «Ավան-

¹ Արամ Վրույր, Զուղա, «Պատմաբանասիրական հանդես», 1967 թ., № 4, էջ 171։

² Արամ Վրույր, Զուղա, էջ 170։

դապատումում» (էջ 169):

Հետաքրքրությունից զուրկ չէ նաև Ա. Վրույրի «Պարսկական բանաստեղծությունը Անվո պարիսպների վրա» հնագիտական ակնարկը՝ զետեղված «Հուշարար» հանդեսի 1913 թ. № 13-ում:

«Ինձ համար շատ հետաքրքիր է Ձեր կարծիքը Զուլֆայի նկարների մասին,— Հին Զուլայի լուսանկարչական աշխատանքները Մառին ուղարկելուց հետո հարցնում է Վրույրը,— թե նրանք արդյոք պիտի ծառայեն այն նպատակին, որի համար նկարված են: Բավական պարզ և որոշ շեշտված են նկարների մեջ այդ քարաքանդակների ընդհանուր առանձնահատկությունները: Շատ և շատ ցավում եմ, որ 1—2 մանրամասնություններ ևս չկցվեցին այդ նկարներին, որովհետև հիվանդությունս արգելք եղավ: Բայց ինձ մոտ նշանակված են, և ես առաջին առիթը չեմ փախցնելու դրանց ևս կցելու նկարների ժողովածուին, որով իմ կարծիքով, նրանք պիտի կազմեն մի ընդհանուր ամբողջություն»¹:

Հաջորդ՝ 1916 թ. ամռանը Մառը մի խումբ գործընկերներով մեկնել է Վան՝ քաղաքի մերձակա վայրերի հետազոտության նպատակով: Վանի գիտարշավի անդամներն էին Ն. Մառից բացի՝ Հովսեփ Օրբելին, Աշխարհբեկ Լոռու-Մելիք Քալանթարը և Արամ Վրույրը: Սակայն ժամանակի շիկացած մթնոլորտի պատճառով (արդեն սկսված էր Մեծ եղեռնը, որի ալիքները հասել էին նաև Վասպուրական աշխարհը): արշավախումբը երկար չկարողացավ մնալ այնտեղ:

Վանում կարճատև մի շրջան գիտարշավախմբի կազմում գործելուց հետո Արամ Վրույրը վերադառնում է Թիֆլիս: Դրանով ավարտվում է Ն. Մառի հետ նրա համագործակցությունը:

1917 թ.-ին արդեն Արամ Վրույրը բացակայում էր Անիի պեղումները կատարող գիտարշավախմբի կազմից: Նրան փոխարինելու եկավ կրտսեր որդին՝ Արտաշես Վրույրը: Դա Անիի 16-րդ գիտարշավն էր, որով և վերջակետվեց Բագրատունյաց մայրաքաղաքի մառյան ուսումնասիրությունը,...

¹ Նամակը գրված է 1916 թ. մարտի 9-ին, պահվում է Մառի արխիվում:

2. ՈՐԴԻՆ

Արտաշես Վրույրի հետաքրքրությունը հնագիտական լուսանկարչության նկատմամբ ծնվել է մանուկ հասակից, սակայն այդ բնագավառում գործնական մասնակցություն սկսել է ունենալ 1912 թվականից միայն: Այդ տարվա նրա այցը Անի նշանավորվել է նրանով, որ հոր՝ Արամ Վրույրի անմիջական հսկողության ներքո, որպես կրտսեր գործընկեր, անդրանիկ «հնագիտական» շրջագայությունը կատարել է ավերակ քաղաքում: Թեպետ մինչ այդ, սկսած 1901-ից՝ գրեթե ամեն ամառ ընտանիքի հետ նա եղել էր Անիում, սակայն այդ այցը առանձնահատուկ նշանակություն է ստացել այն իմաստով, որ, ըստ էության, սկիզբ է դրել նրա լուսանկարչական գործունեությանը...

...Շրջում էր հոր հետ ավերակներում, մոտիկից զննում հուշարձանները: Հայրը բացատրում և ցուցադրում էր, թե տվյալ հուշարձանը ո՞ր դիրքից պետք է լուսանկարել, ինչպիսի լուսավորության պայմաններում (նայած ո՞ր կետից և օրվա ո՞ր ժամին էր կատարվելու լուսանկարումը): Երբ հայրը այս կամ այն հուշարձանը պարզակետում էր (ֆոկուսի գցում), ստուգել էր տալիս որդուն, թե որքանով ճիշտ է ընկալված կաթնապակու վրա պատկերված օբյեկտը: Լուսանկարումները կատարելուց հետո հայր և որդի միասին երևակում էին լուսապակիները, իսկ հետագա բոլոր տեխնիկական աշխատանքները (լուսապակիների լվացում, շորացում և այլն) կատարում էր սկսնակ Արտաշեսը:

Դեռ տարիներ առաջ հայրը որոշել էր այդ մասնագիտու-

թյունը փոխանցել ավագ որդուն՝ Արային, սակայն վերջինս հետաքրքրություն չէր ցուցաբերել այդ գործի նկատմամբ: Հայրը դրանից հետո կրկին փորձեր է արել Արայի մեջ դեպի լուսանկարչությունը սեր արթնացնելու համար, նույնիսկ այդ նպատակով իր հետ տարել է Հին Զուղա, սակայն ապարդյուն: Իսկ Արտաշեսը, առաջին իսկ օրերից, արտակարգ հետաքրքրություն և ուշիմություն է դրսևորել այդ գործի նկատմամբ, արժանանալով հոր խրախուսանքին: Տարիների հետ Արտաշեսը բավականին առաջադիմել է լուսանկարչության ասպարեզում:

«1913—14 թվականներին ես արդեն բավականին ծանոթ էի Անիի պատմությանը՝ հաճախ կլանված ունկնդրում էի պրոֆեսոր Մառի, ճարտարապետ Թորամանյանի, Հ. Օրբելու և հորս բացատրությունները Անիի այս կամ այն հուշարձանի և հնագրանում զետեղված բազմաթիվ իրերի մասին, երբ նրանք բացատրում էին այցելուներին: Եվ այդ գիտելիքներով զինված՝ հաճախ առիթ եմ ունեցել Անիի այցելուներին առաջնորդելու դեպի հուշարձանները և բացատրական փոքրիկ տեղեկություններ տալ նրանց»¹, — վերհիշում է Արտաշես Վրույրը իր «Անիում» հուշագրության մեջ:

1915 թվականին արդեն Արտաշեսն այնքան նախապատրաստված էր, որ Ն. Մառը վստահել է նրան ընդգրկելու Անիի գիտարշավի կազմում՝ նախապես որպես տեխնիկական բանվոր:

«Ես որպես տեխնիկական բանվոր, պետք է աջակցեի ճարտարապետ Ն. Բունիաթյանին, որի անմիջական օգնականն էր Տարագրոսը, — գրում է Արտ. Վրույրը: — Կյանքիս մեջ դա իմ անդրանիկ քայլն էր. լծվեցի աշխատանքի, որը տևեց 47 օր, օրական մեկ ուրբլի աշխատավարձով»²:

Այդ ընթացքում՝ Ն. Բունիաթյանի ղեկավարությամբ, Արտ. Վրույրը մասնակցություն է ունեցել Ապուղամրենց ս. Գրիգոր եկեղեցու, փլված մինարեի մոտ պեղված տաճարի և Երերուքի շափագրումներին, միաժամանակ օգնելով հորը լուսանկարչական աշխատանքներում: Արտաշեսին հայրը հանձնել

¹ Արտաշես Վրույր, Անիում, Երևան, 1979 թ., էջ 35:

² Նույն տեղը, էջ 48:

էր երեք տուփ լուսապատկերներ ինքնուրույն փորձեր կատարելու համար: Մի շաբաթ օր, երբ ավարտել էին պեղումների հետ կապված աշխատանքները, Արտաշեսը գնացել է հոշավանք և կատարել մի շարք լուսագրումներ: Գրանք պատահմամբ դիտում է Մառը, խրախուսում երիտասարդին և տալիս անդրանիկ առաջադրանքը՝ լուսանկարել ա. Փրկիչ եկեղեցու մոտակայքում պեղված եկեղեցու դռան ճակատի արձանագրությունը: Հանձնարարությունը կատարվել է: Մառը բավարարված էր աշխատանքից: Դա եղել է Արտաշեսի անդրանիկ քննությունը:

Այդ տարի Թ. Թորամանյանը դրադված էր Բագնայրի հուշարձանների ուսումնասիրությունից և Անի վերադարձավ օգոստոսին: Թորամանյանի առաջարկով Արտաշեսը ընկերակցել է նրան Անիում մի քանի հուշարձաններ լուսանկարելու գործում: Մեծանուն գիտնականի հետ գործնական աշխատումը լուրջ փորձաշրջան է հանդիսացել սկսնակի համար: Թորամանյանը աշխատանքին զուգընթաց բացատրում էր Արտաշեսին լույսերի և լուսանկարվելիք հուշարձանների կետերի ընտրությունը, լուսանկարչական գործիքի դիաֆրագմայի աստիճանի ու էքսպոզիցիայի շափի որոշումը, ինչպես նաև ճարտարապետական կառուցվածքների մասերի ընդգրկման սահմանները լուսապատկերների վրա:

1916-ին, երբ գիտարշավախմբի մի մասը՝ Ն. Մատի գլխավորությամբ մեկնել է Վան, Անիում մնացել են Գ. Զուքինովը՝ որպես Ն. Մատի տեղակալ, Ն. Տոկարսկին և Արտաշես Վրույրը՝ որպես լուսանկարիչ: Կուտակած փորձն ու գիտելիքները հնարավորություն են ընձեռել 19-ամյա պատանուն դառնալու գիտարշավախմբի անդամ: Այդ վստահությունը միաժամանակ խիստ պարտավորեցնող էր:

Արտաշես Վրույրի 1916 թ. Անվո գործունեությունից հատկապես հիշատակության է արժանի 1911 թվականին ի հայտ եկած եկեղեցու մանրամասն լուսանկարումը (շափագրումների կատարում էր Նիկոլայ Տոկարսկին): Այդ աշխատանքների մասին հիշատակված է Տոկարսկու՝ «По страницам истории армянской архитектуры» — աշխատությունում (Երևան, 1973 թ., էջ 5):

Հաջորդ՝ 1917 թվականին Արտ. Վրույրը աշխատել է



Ամբերդ.— 1930 թ.: Հ. Ա. Օրբելի:
Լուսանկարեց Արտաշես Վրույրը:



Գորիսի շրջան, Ծիմուհայր գյուղ.— Խաչեր:
Լուսանկարեց Արտաշես Վրույրը, 1955 թ.:



Մարտունու շրջան.— Սեդրակ Բարխուդարյանը Շհանի
խաչքարի մոտ:
Լուսանկարեց Արտաշես Վրույրը, 1930 թ.:

դոսիայի ազգային ճարտարապետական հուշարձանների լուսանկարչական նեգատիվները, որոնց հեղինակն է հիմնականում Արտաշես Վրույրը: Դրանցից 60-ը պատկերում են լեռնային Ղարաբաղում, 13-ը Թեոդոսիայում, իսկ 1308-ը՝ խորհրդային Հայաստանում եղած կոթողները:

Արխիվում ամփոփված նյութերում իր բաժինն ունի նաև Արտաշես Վրույրի ավագ եղբայրը՝ Արա Վրույրը, որի լուսագրած նեգատիվները (թվով 271) պատկերում են մեր հանրապետության տարբեր շրջանների պատմական հուշարձանները:

Երբեմնի կրտսեր Անեցին բոլորել է արդեն իր կյանքի 85-րդ գարունը¹:

— Իմ երկար կյանքի ընթացքում արեցի այն ամենը, ինչ որ կարող էի, տվեցի հնարավորը իմ ժողովրդին՝ առանց ակնկալիքների, անշահախնդիր նվիրումով, — իմ հանդիպումներից մեկի ժամանակ ասաց հայոց քաղաքամայրը պեղող գիտարշավի միակ կենդանի վկան՝ վերջին մոհիկանը: — Ու դժգոհ չեմ իմ ապրած կյանքից: Եթե հրաշքով այն նորից կրկնվեր, աներեք կքայլելի նույն ճանապարհով:

Նոյեմբեր, 1982 թ.

* * *

Արամ և Արտաշես Վրույրների լուսանկարչական հայրենանվեր գործունեության վերաբերյալ շարադրված այս գրքույկը արդարացի կլինի, որ լրացում ունենա: Խոսքը վերաբերում է Արամ Վրույրի ավագ որդու՝ Արայի (ծնվ. 1896 թ.) նույն կարգի գործունեությանը²: Թեև նա Անիում չի օգնել իր հորը, սակայն հետագայում, խորհրդային ժամանակաշրջանում հորից որդեգրել է նրա երկու զբաղմունքը՝ եղել է դերասան և լուսանկարիչ: Այդ երկու զբաղմունքը Վրույրների համար հիրավի տոհմական էր: Թերևս բացառություն է կազմել դատրերից մեկը՝ Մադիկը (Վրացական ԽՍՀ վաստա-

¹ Արտաշես Վրույրը վախճանվեց 1987 թ.:

² Լրացումը կատարել է պրոֆ. Վ. Մ. Հարությունյանը:

կազմոր դերասանուհի), որը երկար տարիներ աշխատել է Թբիլիսիի հայկական դրամատիկական թատրոնում¹,

Բախտ չեմ ունեցել ծանոթ լինելու Արամ Վրույրին, բայց նրա երկու որդիներին գիտեի տակավին ուսանողական տարիներից: Այն ժամանակ Արտաշեսը իմ հարևանն էր Ամիրյան փողոցում, իսկ Արան ապրում էր Սպանդարյան փողոցում, այն շենքի հարևանությամբ, որտեղ բնակվում էր Եղիշե Զարենցը: Երկու եղբայրներն էլ զբաղվում էին լուսանկարչությամբ, հոր և իրենց նեգատիվներից լուսանկարներ էին տպում, վաճառում հիմնարկների, հայ ճարտարապետությամբ հետաքրքրվող ճարտարապետներին: Երկու եղբայրները լինելով նույն զբաղմունքի տեր, տրամագծորեն տարբեր էին իրենց բնավորությամբ և խառնվածքով: Կրտսեր եղբայր Արտաշեսը խոհուն ու լրջմիտ էր, իսկ Արան՝ կատակասեր, կենսախիսնդ և սրամիտ, կերուխումի սեղանների երկրպագու: Այն միակ սենյակը, ուր նա ապրում էր, միևնույն ժամանակ իր լուսանկարչական լաբորատորիան էր: Փակում էր դուռը, խուլ քողարկում լուսամուտներն ու գործի անցնում: Հաճախ էի դուռը փակ գտնում, բայց գիտեի, որ տանն է:

Երբ տակավին պոլիտեխնիկական ինստիտուտի վերջին կուրսի ուսանող էի և ստանձնեցի ճարտարապետության կաբինետի վարիչի պաշտոնը, երկու եղբայրների աջակցությամբ կարողացանք հարստացնել կաբինետի ֆոտոհավաքածուն: Հին Երևանի և հայկական ճարտարապետության հուշարձանների լուսանկարներով ու դրանցից թեմատիկ ալբոմներ կազմել: Սովորաբար Արան ինձ էր նվիրում խոտան լուսանկարները, որոնցով ստեղծվեց իմ առաջին հավաքածուն: Ես երախտապարտ եմ երկու եղբորը նրա համար, որ լուսանկարների միջոցով ինձ համար բացեցին հայկական ճարտարապետության անսահմանորեն հարուստ ու գեղեցիկ աշխարհը:

Իմ մտերմությունը Արայի հետ ավելի սերտ դարձավ, երբ նախապատերազմյան տարիներին Արան, ստանձնելով ճարտարապետության ամբիոնի լուսանկարչական լաբորատորիայի վարիչի պաշտոնը, կարճատև դարձավ իմ գործընկերը: Զավեշտական շատ պատմություններ են կապված այս տա-

¹ Այս գրքույկի հեղինակ, վաղամեռիկ Ռոբերտ Փաշայանի մայրը:

րիների հետ, մեկն էլ Սևանա կղզում, երբ շափագրում էի վանքի հուշարձանները ու իրեն հրավիրել էի դրանք լուսանկարելու։ Այդտեղ էլ վկա եղա նրա լուսանկարչական հմտությանը, որպիսին անշուշտ ժառանգել էր հորից։ Գիտեր ընտրել լուսանկարելու առավել նպաստավոր կետը, հաշվի առնել հուշարձանի լուսավորվածությունը, բնական շրջապատը։ Նրա կատարած լուսանկարները նույնպես, ինչպես հորն ու կրտսեր եղբորը, կրում են պրոֆեսիոնալ բարձր մակարդակի կնիքը, լավորակ են։

Իր դերասանական գործունեությանը պակաս տեղյակ եմ։ Երբեմն իրենից զավեշտական պատմություններ եմ լսել հոր ղեկավարությամբ դերասանական խմբի կազմում Բաթումիի և Անդրկովկասի հայաշատ այլ բնակավայրերում կատարված հյուրախաղերի, ինչպես նաև Լենինականի Ա. Մուսվյանի անվան դրամատիկական թատրոնում աշխատած տարիների մասին։ Կյանքի այդ բնագավառում իր գործունեության արձանագրումը թողնելով թատերագետներին, վերադառնանք Արա Վրույրի լուսանկարչական գործունեությանը, նվիրված հայկական ճարտարապետության հուշարձանների լուսանկարմանը¹։

Երկու եղբայրները համատեղ նկարել են միայն Ախթալայի վանքի հուշարձաններն ու Գառնիի հեթանոսական տաճարի ավերակները, ճարտարապետական տարբեր մանրամասները։ Արան առանձին լուսանկարել է Ավանի, Պտղնիի, Թարգմանշած վանքի, Աշտարակի Կարմրավոր և Մարինե, Եղվարդի երկնահարկ ս. Աստվածածին եկեղեցիները, Թալինի Կամսարականների եկեղեցին և բազիլիկան, Սանահինի կամուրջը, ինչպես նաև Մուղնիի, Հովհաննավանքի, Սաղմոսավանքի, Բջնիի, Կեչառիսի, Սևանի, Մակարավանքի և Ամաղույի նորավանքի հուշարձանախմբերը։

Արա Վրույրի լուսանկարչական գործերի մեջ հատուկ և արժեքավոր տեղ են գրավում Հին Երևանի ժողովրդական բնակելի տների լավագույն նմուշների լուսանկարումը, նմուշ-

¹ Տեղեկությունները «Էրեբունի» թանգարանին հանձնված նեգատիվների ցուցակից բաղել է Վրույրների մյուս քրոջ որդին՝ Մարտունի Բլբուլյանը, որի համար այս առիթով մեր շնորհակալությունն ենք հայտնում։

ների, որոնք ցավոք դադարեցին գոյութիւն ունենալուց մայրաքաղաքի բուն կառուցապատման հետեանքով:

Համառոտակի, ահա այսպիսին է Արա Վրույրի լուսանկարչական ներդրումը իր հոր և եղբոր բազմահարուստ արխիվում, որը իր արժանի ու պատվավոր տեղը գրավեց հանրապետութեան թանգարաններից մեկում, դառնալով պետական սեփականութիւն:

Արա Վրույրի շատ հաճելի մտերմութիւնը 5—6 տարի միայն վայելեցի: Մեծ Հայրենականի սկզբին երկուսս էլ բանակ զորակոչվեցինք: Շարքային կապավոր Արան ղոհվեց 1943 թ. Նովոռոսիյսկ քաղաքի ռազմաճակատի «Սախարնայա գոլովա» կոչված տեղամասում, երբ հրամանատարութիւնից հանձնարարութիւն էր ստացել վերականգնելու կապի ընդհատված գիծը:

Հոգուս պարտքը համարեցի ռազմաճակատից շվերադարձած, իր կյանքը հայրենիքի ազատագրութեան համար զոհաբերած ավագ ընկերոջս ու բարեկամիս մասին այս լրացումը կատարելու: Դա անհրաժեշտ համարեցի, որպեսզի ներկա գրքում նրա բարի անունն ու վաստակը նույնպես արձանագրվի, որովհետև մեկ ուրիշ առիթ երևի այլևս չլինի:

Այս նույն առիթն օգտագործելով, հրատարակման եմ հանձնում իմ արխիվում պահպանված մի կարևոր փաստաթուղթ՝ պրոֆ. Նիկ. Մառի Արամ Վրույրին ուղղված հայերեն նամակը: Պետերբուրգում 1913 թ. մարտի 13-ին գրված այս նամակը վկայում է Անիի հնագիտական արշավախմբի ղեկավարի, նշանավոր հայագետի, կովկասագետի և արևելագետի, հայ ժողովրդի մեծ երախտավորի, Արամ Վրույրի նկատմամբ ունեցած հարգանքի ու հոգատարութեան մասին: